

Մենք ԱԻՆ-ի հանձնարարականով այցելեցինք Ճամբարակ համայնք, շրջեցինք տարբեր դպրոցներում, ծանոթացանք ուսուցչական կոլեկտիվների հետ:

Մեր հայրենիքը շատ գեղեցիկ է ու տարբեր:

Երբ անտառամիջյան ճանապարհով բարձրանում էինք Կալավան, ծառերի գույնզգույն տերևները կարծես ժպտում էին: Մենք շատ զարմացանք, երբ տեսանք, թե ինչպես են խոզերը առանց հսկողության շրջում անտառում:

Պատմեցին՝ եղել են դեպքեր, որ օրերով խոզերը և կովերը համարվել են կորած, բայց հետո անակնկալ վերադարձել են տերերի մոտ:

Կալավանի դպրոցը փոքր է՝ այնտեղ սովորում են 20-30 աշակերտ: Դպրոցի վաստակաշատ տնօրեն Զվարթ Քեշիշյանը հիացմունքով է խոսում ուսուցիչների և աշակերտների մասին, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայում հայրենի եզերքի շենացման և պաշտպանության գործում:

Այցելեցինք նաև Այգուտ գյուղ, որտեղ հիմնովին վերանորոգվել էր դպրոցը. այդ մասին պատմեց Արա Երիցյանը: Նա իսկական հայրենասեր ու իր գործին նվիրված անձնավորություն է, նա իր սեփական օրինակով երեխաներին մատուցում է հայրենասիրության դասեր: Տեղեկանալով, որ հեռվից ենք եկել, հյուրընկալողի իրավունքով պարտադրեց օգտվել հյուրասիրությունից: Շատ հավանեցինք Այգուտի պանիրը:

Ապա այցելեցինք Աղբերքի միջնակարգ դպրոց, ծանոթացանք դպրոցի տնօրեն Ղալեշյան Անահիտի հետ, ով մի սքանչելի և հայրենասեր անձնավորություն է: Նրան լսելով՝ նոր ուժ ու ոգի ես առնում՝ մոռանալով պատերազմական օրերի դաժանություններն ու դժվարությունները:

Մեր այցելեցինք և հետաքրքիր հանդիպումներ ունեցանք նաեւ Ճամբարակի N 1 հիմնական, Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N 2 հիմնական, Ճամբարակի N 4 միջնակարգ, Անտառամեջ, Գետիկ, Դպրաբակ, Դրախտիկ, Թթուջուր, Մարտունի, Շողակաթ, Ջիլ համայնքների և հատկապես Վահան գյուղի դպրոցների ուսուցչական կոլեկտիվների հետ:

Մենք խորին շնորհակալություն ենք հայտնում այդ մարդկանց՝ հերոս, բանիմաց, քաջ տղաներ ու աղջիկներ դաստիարակելու համար:

Մեզ մշտապես այդ օրերին ուղեկցում էր Ճամբարակ համայնքի հրշեջ փրկարարական ջոկատի կապիտան Միշա Մուժիկյանը, նա այն մարդն է, ով միշտ իր տեղում է, նրա բոլոր ասածները վկայում են այն մասին, որ ինքը ապրում է իր համայնքի հաջողություններով և հոգսերով:

Շնորհակալություն ենք հայտնում Միշա Մուժիկյանին և ամբողջ Ճամբարակի փրկարարական ջոկատին՝ իրենց հայրենանվեր աշխատանքի համար:

**1+1 թերթի խմբագրություն**